


Ամենայն թղթակցութիւնք
և վճարմունք պարտին ուղ-
ղուիլ առ խմբագրութիւնս
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
(Ամէն երկրի համար)
Տարեկան 2 թաւէս
Մէկ թիւը 10 էնթ



All communications and sub-
scriptions to be addressed to
DR. M. S. GABRIEL,
EDITOR OF THE "HAIK"
An Armenian fortnightly
Political and Hygienic
202 W. 23rd St., New York.
TERMS TO SUBSCRIBERS.
For all countries, One year \$2.00
Single copy, \$0.10

ԿԻՍՏԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա.ՏԱՐԻ

ՆԻՒ ԵՈՐԺ, ՄԱՐՏ 15 1891

ԹԻՒ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Սուր երկսայրի.— Հարստահարեալ Հայաստան.—
Նամակ Սերաստիայէն.— Հայաստանն ի դարում.— Հայե-
րէն լեզուն.— Վարդանանց Հանդէս.— Հայկական Միու-
թիւնն յԱմերիկայ.— Կեդրոնական Յանձնախմբի ինդիւրն
.— Հայք.— Բարոյականին ազդեցութիւնն ի վերայ ֆիզի-
քականին.— Այլ եւ այլք.

Entered as second class matter at the New York, N. Y. Post
Office Dec. 15th 1890.

ՍՈՒՐ ԵՐԿՍԱՅԻ

Օսմանցիք վարժուած էին զՀայ ժողովուրդն
սեպել հին քաղաքակրթութեան մի մաշած բեկորն
որ իրենց գահուն իբր զարդ կը ծառայէր, և այժմ
կ'ապշին տեսնելով այդ պաճուճանք որպէս հրա-
շիւք իմն փոխակերպեալ ի սուր երկսայրի, որ
ոպառնալից շողշողմամբ կը տատանի Օսմանեան
գահուն շուրջ.

Աւարդ որ Սուլթանն փոխանակ իմաստուն քա-
ղաքականութեամբ իւր մէջքէն կ'սխեղու զսուրն
կը ջանայ ապօրէն բարկութեամբ խորտակել զայն
ընտ ոտիւք.

Հայքս ինչ պարտիմք ընել այս տագնապեցուցիչ և
պատմական պահուն.

Պարտիմք նախ ջանալ, եթէ կարելի է, տալ
Պալատին իմիս առնուլ թէ մեք պատրաստ եմք իբր
հաւաստաբարտիւ քաղաքացի իսլամ տարերաց
հետ ծառայել Օսմանեան շահուց և Հայրենեաց ոչ
թէ իբր դերի չտրչարուիլ— թէ մեր բաղձանք է
զՀայաստան ընել ինքնօրէն Նահանգ մի ամենայնիւ
հաւատարիմ և հարկատու Սուլթանաց Գահուն՝ ոչ
թէ զայն առանձին Տէրութիւն մ'ընել Օսմանեան
Պետութենէն սնկախ և զատ. Այս Բազում անգամ
կրկնուած է պաշտօնապէս և ոչ պաշտօնապէս մեր
ի Տաճկաստան բնակեալ Հայրենակցաց կողմանէ,
բայց արժան է որ արտասահմանի ազատական Հայ

Մամուլն եւս զնոյն կրկնէ յատկօրէն, որպէս զի
երբ յապագային ստիպուիմք Պալատին դէմ գոր-
ծածել այն ուր զոր այժմ անոր ծառայութեան
նուիրել յօժար եմք, յովանդակ պատասխանատու-
ութիւնն իրեն վերայ ծանրանայ.

Նոյնպէս պարտիմք քաղաքակիրթ աշխարհի
առջեւ դնել ճշգրիտ լոյսով և մեր Հայկական
պահանջմանց. Այժմ ազգք և ազինք կը լսեն Հայ
անունն, կը սիրեն Հայաստանի պատմութիւնն, կը
կարգան նորա ներկայ հարստահարութեանց ապս-
տամբեցուցիչ նկարագիրն, և համակիր ուշիւ կ'ուն-
կնդրեն նորա միջազգային դատավարութեան. Չա-
նանք ուրեմն Եւրոպական ուշադրութիւնն զբաղե-
ցունել լուրջ բայց ոչ չափազանցեալ տեղեկագրու-
թեամբք, և հասկցունել ամենուն մեր պահանջ-
մանց ճշմարիտ բնութիւնն. Կարծեմք թէ մեր Հայ-
րենակցաց մեծամասնութեան ընդունելի կերպիւ
սահմանած կը լինիմք մեր դատ եթէ ըսեմք—

Մեք, Բ. Դրան հպատակ Հայքս, որ իբրեւ օրի-
նաւոր կառավարութեան տուրք կը վճարեմք, կը
պահանջէինք որ իբր օրինաւոր կառավարութիւն
կառավարէ մեզ, բայց դառն փորձիւ քաջ համոզուած
լինելով թէ նաչկամիր զմեզ կառավարել եթէ կարե-
նայ իսկ և չկրնար կառավարել եթէ կամենայ իսկ,
վասնզի զեղծ է և տկար միանգամայն, կը պահանջեմք որ
Պետլինեան Դաշնագիրն ստորագրող Տէրութիւնք իրենց
ուղղակի հսկողութեան ներքեւ առնուն հայկական
գաւառաց կառավարութիւնն ըստ դրամադրութեան
նոյն դաշնագրոյ 61րդ. յօդուածին, եւ բարեկար-
գութեանց իրազործումն յանձնեն Եւրոպացի ընդհանուր
կառավարչի մի որ զգեցեալ լինի քաղաքային լիա-
զօր ղօրութեամբ.

Մեր պահանջ այս ձեւին տակ աններկայելի է
Բ. Դրան ի ձեռն մեր Պատրիարքաց, ուստի և առ
այժմ մեր Ֆռանսական բերանք «Առմէնի» եւսր Հա-

յաստան» պաշտօն ունին յեղ յեղել զայն եւրոպայի ականջին, մինչև որ գաղթական Հայ աշխարհի Ազգային ժողովն կազմուի և պաշտօնապէս ալ նոյնն պահանջէ։ Կրնան մեր թերթք բողոքոյ խիստ եղանակաց ալ երբեմն դիմել, վասն զի սա անուրանալի է որ եթէ ՅԱԳ յօդուածն ցարդ չէ գործադրուած, յանձնաքն նուազ Բ. Դրանն է՝ որ զեղծ է և տկար, քան եւրոպական Մեծ Տէրութեանց՝ որք կարող են բայց անհոգ իրենց իրաւունքն և միանգամայն պարտքն եզոզ միջամտութիւնն ընել ի Հայաստան։

Իսկ «Հայք»ի, Հնչակի և «Արմէնիա»ի պաշտօնն է լո՛ւրջ սկզբանց քարոզութեամբ կրթել Հայ գաղթականութիւններն, ներշնչելի նոսա ինքնապաշտպանութեան և անձնութեան զգացումներ, յորդորել զնոսա ի միաբանութիւն և ի միութիւն, որք են ներքին ուժոյ անհրաժեշտ և հիմնական պայմանք։

Պարտիմք այնպէս խօսել մեր Ֆրանսախօս բերաններով որպէս թէ դիւանագիտութեամբ պիտի յաջողիմք—որպէս թէ եւրոպա պիտի գործադրէ ՅԱԳ յօդուածն ի հեճուկս Բ. Դրան գովամակութեան։ միւս կողմանէ մեր Հայտիւս մամուլ այնպէս խօսելու է և այնպիսի փութով կողմակերպելու է մեր գաղթային ոյժերն որպէս թէ բնաւ յոյս չլինէր դիւանագիտական միջոցներէ օգտուելու—որպէս թէ մեք մեր զօրութեամբ միայն պիտի ստանամք մեր արդար պահանջ։

Ահա այս է մեր ՈՌԻՐՆ ԵՐԿՍՈՅՐԻ։

ՀԱՐՍՏԱՀԱՐԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԹՐԲԱԿԱՆ ՅՈՒԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ

(ս տուկ թղթակցէն «Հայք»ի եւ Մանչեսթր Էքզամինր Էնտ թայմզի)

(Այս թղթակցութիւն անգղիերէն լեզուաւ հրատարակելու գիտմամբ անգղիերէն գրուած է, և սակայն ստիպուած եմք թարգմանել զայն Հայերէնի։)

«Սուլթանի կառավարութիւնն փտելու ճակատադրեալ է» կըսէր Կ. Օլսոյ բարեկարգողական Յանձնախմբի վերջին յայտարարութիւնն «վասն զի նորա բաղադրիչ տարերք են վատութիւն, դայթակղութիւն և բարբարոսութիւն»։ Անոնք որ ծանօթ են «կառավարութեան» Թրքական դրութեան դարձուածոց՝ պիտի անվարան ընդունին այս յայտարարութիւն իրեն ստոյգ նախասացութիւն ապագային նկատմամբ։ Ուշագրաւ իրողութիւն մ'է այժմ՝ զի այն թուրքիոյ կառավարութիւնն պաշտօնական

զեղծման, արհաւիրականութեան և մեքենայութեանց թագաւորութիւնն է ամենայն շրջանակոյց մէջ։ Այս դրութիւնունցած է իւր բնական հետեւանքն—Տաճկաստանի ամբողջ ամէն անկումն ի զօրութենէ և ի հարստութենէ, և հպատակելոյ ծայրայիղ թշուառութիւնն։ Այդ երկրին յոռի վարչութիւնն աղետաբեր եղած է բոլոր քրիստոնեայ ժողովրդոցն՝ և գլխաւորապէս Հայոց։ Ճշմարիտ կը լինի ըսել թէ Հայկական հարստահարութեանց և վայրագութեանց մէկ տասներորդն հազիւ կը հըրատարակուի քաղաքակիրթ երկրաց մէջ։ Լուսաւորեալ և ազատասէր մտաց պարզապէս անհանդուրժելի է տեսնել թէ Սուլթանի ողորմածութեան իբր մէկ ապացոյցն կը հռչակուի ընդ հանուր երբ յոնիրաւի հարստահարեալ, բանտարկեալ կամ աքսորեալ անմեղներու բաղմութեան մէջէն ոմանց աղատութիւն կը շնորհուի։ Սուլթանի թուշակաւոր եւրոպացի «բարեկամքն» և Թրքական Մամուլն ոչ երբէք կը փախցունեն այսպիսի չնչին առիթներ—ինչպէս բանտարկելոյ իբր 90ին արձակման առթիւ—յունկն եւրոպայի և Ամերիկայի հնչեցունելու նորին Վեհափառութեան ներրոգներն, և ցուցնել ջանալու թէ «Ամերիկացի և եւրոպացի հայասէրք ինչպէս նաև Մամուլն ծայրայիղ խստութեամբ և անպատշաճ կերպիւ հակաթրքական խօսքեր կընեն»։ Կարելի է հաւատալ թէ Սուլթանի վատթար շրջապատողք մեծ ընդդիմութիւն կը յարուցանեն ի նըպաստ ատեցեալ ԿեԱՎՈՒՐՆԵՐՈՒՆ արուած կայսերական հրամանաց գործադրման, սակայն եթէ Հայոց թշուառ վիճակն բարեփոխու և դատական արդար վարչութիւն մի հաստատուի անկեղծօրէն բաղձացող լինէր Սուլթանն, շատ աւելի լաւ և երկուց կողմանց շահաւոր արդիւնք—չոտ աւելի լաւ քան զոր կորդադրէ այժմու բարբարիկ քաղաքականութիւնն—անշուշտ յառաջ եկած պիտի լինէին։

Արդարեւ յոյժ ողբալի է զի Օսմանցիք չեն կրնար մըռնել թէ չափաւոր և պաշտպանող քաղաքականութիւն մի հանդէպ Հայոց՝ լաւագոյն միջոցն է նոյա հաւատարմական զգացումներ, ամենայն հայասիրաց համարումներ շնչելու, և շահելու բարեկամութիւնն եւրոպեան և Ամերիկեան հակաթուրք Մամլոյն, որոց ամբաստանութիւնք հիմնեալ են ապացոյցներու քան զամենայն օրինաւորաց վերայ։

ՀԱՅԿ

ՆԱՄԱԿ ՍԵՐԱՍՏԻԱԷՆ

Այս նամակ դիւրահասկանելի պատճառներով ուշացած է
Յունվար 25 1891

Այս օրերս Տաճկաստան թանձր ամպով մը ծածկուած է... Հինգ ամիսէ հետէ ստացուածքի, պատիւի և

կեանքի կորուստ չատ են։ Անցեալներն տեղւոյս մօտակայքն Գէօղիեանի հօրեղբայրը մեռցուցին այս կերպով։ Տաճիկ գիւղացի մը անոր տունը հիւր կըլլաւ և ցոյց կուտայ անթիքա ոսկի դրամ մը՝ ըսելով թէ այս տեսակէն այսինչին քով շատ կայ, երթանք միասին և աժան կերպիւ ծախու առնունք։ Այսպէս 10—15 լիրայի չափ հետ առնելով գիշեր ատեն ճամբայ կեննեն, և երբ քաղաքէն կէս ժամ կը հեռանան, յանկարծ գիւղացին դանակով ի մահ կը վիրաւորէ Հայն և ստակն կողոպտելով կը փախչի։ Սպանեալին ազգականք գտան և բռնեցին ոճրագործն և անհերքելի ապացոյցներով հաստատեցին, և սակայն ոճրագործ թուրքն իրոյ անմեղ արձակուած է, մինչ անոր զոհին կինն ու զաւակներն որբ և անմխիթար կը մնան։

Նաև այս չարաթ երկու Հայ երիտասարդք քաղաքէս երեք քառորդ ժամ հեռի գնտակահար մեռեալ գըտնուեցան։ Ասոնք գիւղերն առևտուրի գնացած էին, ետ դարձած պահուն, որ արշալոյսի ժամանակն է եղբւր, զարնուած են, բայց կողոպտուած չեն, վասն զի իրենց դամիներն գտուած են ի քսակի։ Դեռ գիտցուած չէ թէ ով է զարնողն և ինչ եղած է շարժառիթն։ Միևնոյն օրը գլուխ մը գտնուեցաւ քաղաքիս մեծ կամուրջին քով, և տակաւին ճանչցուած չէ։

Հիմայ ոչ ոք կը համարձակի քաղաքէս՝ հինգ լոպէ հեռանալ։ Արդէն գիշերայն ընա դուրս չենք ելնել։ Եթէ մէկը ու իյէ կերպիւ վշտացնես, վա՛յ քեզ։ Վասն զի ոչ ապահովութիւն կայ, ոչ արդարութիւն և ոչ իսկ քննել... Բաղաքիս գաղտնի ոստիկանաց մէջ բաղմամբիւ Հայ վասակներ կան... Այս կիւրակի լուսանկարիչ Մ. Կ. Նաթանեան ձերբակալեցին տարապարտուց։ Նոյնպէս ձերբակալեցին զՄարտիրոս Պըտկըճեան և ազատութեան յոյս չկայ։ Ասկէ երեք ամիս առաջ ձերբակալեալք դեռ ի բանտի են։ Մի քանի օր առաջ յիսուն Հայ բանտարկեալներ յաքսոր զրկուեցան այլ և այլ տեղեր։ Ամէն առտու կեննենք չենք գիտեր օրն ինչ չարիք պիտի երէ մեզ, ինչ լուրեր պիտի ստկացունեն զմեզ, և թէ ուր պիտի գտնուիմք երեկոյն։ Ի սէր Գրիստոսի, ի սէր մարդկութեան ազատեցէք զմեզ։

Նաև այս երեք ամսուան մէջ երկու Հոյեր բռնի մահմէտականութիւն ընդունեցին։ Մին... Մանճլեցի վարժապետն է, որ այժմ հինգ լիրայ ամսաթոշակով փոխ է, և պաշտօնն է կասկածեալ գրերն ու թղթերն թարգմանել։ Անցեալ օրեր երեք Հայ Դավրաջիներու (քաղաքէս կէս ժամ հեռու հայ գիւղ) ականջներ ու քրթերը կտրեր են։ Այսօր երբ հարկահաւաքը ջրաղացքը կերթայ մի Հայէ պահանջելու արոց մնացորդ մի իւր 15 դահեկան, խեղճը դրամ չունենալով՝ կաղաչէ կը պաղատի որ օր մի ժամանակ տրուի իրեն. ոստիկանն նախ լուտանք կը տեղայ խեղճին գլխուն և ապա մեծ փայտով ահագին հարուած տալով գլխուն երկուքի կը ճեխէ։ Երէկ Տ. Եղիշէ քահանան կանուխ ժամ կերթար, մի քանի հեթանոս վրայ կը հասնին, և լաւ ծեծելէ վերջ տեսնելով որ մարդ կուգայ, կը թողուն կը փախչին։ Ուրիշ օր մ'ալ Տ. Գեւորգ քահանային (որ ևս եկեղեցի

կերթար, մի քանի Թրքեր կըսեն «Ճշմարիտ կրօնն ընդունէ, եթէ ոչ աստէն աստ զքեզ կը մորթենք...»։ Ծերունին կը պատասխանէ թէ պատրաստ է մորթուելու։ Եւ ա՛յա այդ ճգնաժամի մէջ մարդիկ վրայ կը հառնին և Թրքերն կը խուսեն։

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ն

Ք Ս Ա Ն Ն Ն Ո Ր Դ Դ Ա Ր Ո Ւ Մ

Օդային պալատներ կամ ինչպէս կըսեն «Սպանիական դղեակներ» շինել մտաւորական հաճելի և օգտակար զբաղմունք մ'է։ «ՀԱՅՔ»-ի անձուկ էջերն գիտեմ չեն ներեր, ուստի փոքրիկ դղեակ մի միայն պիտի շինեմ հոն, յոր նայիլ պիտի հրաւիրեմ անոր բանասէր և ազգասէր ընթերցողներն որք, աւաղ, ամէն օր ստիպուած են նախորժ և ցուալի դէպքերու պատմութիւնն կարդալ։

Առանց դարուն ընդհանուր նկարագիրն ընել փորձելու պիտի ան նիւմ ի Հայաստան և ցուցնեմ թէ մեր սիրելի Հայրենիք ի՛նչ վիճակի արժանացած է։

Հայաստան ազատ է։ Հայք ինքնօրէն են։ Կարին, Մայրաքաղաք. երկաթուղիներով բոլոր հայրենի կարևոր քաղաքաց և աւանաց հետ ի յարաբերութեան է։ Հոն է Ազգային ժողովն՝ ընտրուած բովանդակ ժողովրդէն ազատ քուէարկութեամբ արանց և կանանց։ Վերցուած է Կաթողիկոսութիւն և Պատրիարքութիւն, զի անոնց այլ ևս հարկ չէ մնացած, Հայրենեաց նաւը արդէն աղատութեան անդորր նաւահանգիստն հասած լինելով՝ կրօնապէս զայն պաշտպանելու պէտք չկայ։ Հայ Հասարակապետութեան սկզբունքն է ազատութիւն քաղաքային, ընկերական և կրօնական։ 1991 Յունվարի առաջին օրն է և Հայ եկեղեցեաց բարձրագագաթ աշտարակներէն հազարաւոր զանգակներ հրճուանօք կը հնչեն և ժողովուրդը կը դիմէ խումբ խումբ Կարնոյ մայր եկեղեցին, ուր ի ներկայութեան ազգային Նախագահին «զքեզ Աստուած Գոհարանմբ» մաղթանքը կ'երգուի առաջնորդութեամբ քաղցրաձայն երգեհոնի և մասնակցութեամբ բոլոր ժողովրդին։ Յետ առուր պատշաճի արարողութեան ազգային պատգամաւորք կը ներկայանան Նախագահին ի շնորհաւորութիւն նոր Տարւոյ։ Նկատելի է որ տարօրինակ զգեստներով մարդիկ ալ կան իշարա ազգային պատգամաւորաց, դոքա Գուրգեր Ասորիք ևն ևն են, որք այժմ միասին Հայ Հասարակապետական դաշնակցութիւնն կը կազմեն։ Հոս մենք կը բերենք դար մ'առաջ ապրող ազգային բանաստեղծ անմահ Մկրտիչ Պէշիկթաշեանի այն այն գեղեցիկ երգի մէկ տունը յորում նա կ'երգէր տխրագին։—

Մէկտեղ լացինք մենք՝ ի հընում...

Եկէք դարձեալ յար անրաժան

Խառնենք զարտօսր և ըղիմդում

Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան։

Նոյն օր «Սուրհանդակ Ազգային» լրագիրը իւր էջերը կը լեցնէ պատմական ակնարկներով դէպ անցեալ պատմութիւնն երկրին և ազգին որ սակայն բաղմաց անհաւատալի կը թուի։ Ամէն բան կարգի կանոնի դրուած

է. կատարեալ ապահովութիւն կը տրի՛ն երկրին ամէն կողմը. երկրագործութիւն և արուեստը ծաղկած են, դադարած է պանդխտութեան հասնելը և այժմ ուրիշ ազգեր բազմութեամբ կը դիմեն յաշխարհն արարատեան տեսնելու Հին Աշխարհի նոր կեանքը և երջանկութիւնը. Գոհ է ժողովուրդը և զուարթ. ամէն մարդ կը վայելէ ընտանեկան կեանքի բոլոր հրճուանքն ու հաճոյքը:

Կանցնինք արագաքայլ Կարնոյ լայն և գեղեցկայատակ ծառուղիներէն և կանգ կ'առնունք հոյակապ շէնքի մ'առջև որոյ ճակատն արձանագրուած է «Թանգարան Ազգային Հնութեանց» և ներս մտնելով կը զարմանամք որ փոխանակ Հայկիին, Վարդանին ու Եղիշէին և այլոց՝ Ներսէս Պատրիարքի, Խրիմեան Հայրիկի, Մկրտիչ Սանատրեանի և այլոց արձանները զետեղուած են, և կը յիշենք Քամառ Քաթիպայի խօսքը. «Հայկ ու Լեւոնին մոռանանք, եղբարք, թափ տանք մեզանից փոշին հնութեան, վերածնենք մեր մէջ նոր կեանք և նոր բարք, կեցցէ շատ օրեր Մանուկ Հայաստան»: Մի ուրիշ սենեկի մէջ կը տեսնենք ժո՛ղ դարու Հայ հրատարակութիւնք, գրեանք, լրագիրք և պարբերականք հանդերձ հեղինակների և խմբագիրների մեծագիր լուսանկարներով, և կը գոչեմք երախտագիտական անզուսպ զգացումներով— «Օրհնեալ լինի ձեր անմահ յիշատակ, դուք որ զոհեցիք և զոհուեցաք վասն ազգային կենաց և հայ ազգի»:

Օրն տարածամած լինելով կը մեկնիմք դէպ ի «Պանդոն» Վասպուրական Արծուոյն: Բոլոր փողոցներ ելեքտրական լուսով լուսաւորուած են և հանրակառքեր կայ ծակի արագութեամբ աշու ձախ կ'ընթանան: Յետ ընթերեալ կ'երթամք ազգային թատրոնը ուր Գ-Տ հաղար անձինք համաժողովուած են: Անցեալ ժո՛ղ դարու Հայ կեանքի զանազան դիպուածներէն սրտաճմիրկ պատկերներ կը ներկայացուին և մեծ տպաւորութիւն կը գործեն հանդիսատեսից վրայ: Երբ Խրիմեան Հայրիկ բեմի վրայ երեցաւ նստած իւր աքսորավայրումի Ս. Երուսաղեմ միակ, իւր սղեղարդ պատկառելի կերպարանօք իրրե թէ Հայոց հին հաւատարիմ Հրեշտակն լինէր, որ շարունակ կը հսկէ իւր թշուառ ազգի բաղդին վրայ, կը գրէ, կ'աղօթէ և կը խորհի գիշեր ցերեկ: Երբ կ'ըսեմ իրի վերջին և ամենամեծ զոհ 1890ի բարբարոսութեան այս սուրբ և վեհ անձնաւորութիւն ի տես եկաւ բեմին վրայ, այն ատեն բոլոր հասարակութիւնը յոտին կանգնած սկսեց բուռն ոգեւորութեամբ և եռանդաբեր ծափահարութեամբ երգել. — Հայրիկ, Հայրիկ, քու Հայրենիք, վասպուրական մեր աշխարհ, վարդի փոխան քեզ փուշ բերաւ, ցաւերդ եղան մէկն հաղար: «Հայրիկն ասաց, իմ հայրենեաց փաւն է անուշ քան զվարդ»: Հետեւեալ օր բոլոր լրագիրք կը հրատարակէին Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը հանդերձ իւր գեղեցիկ պատկերներով և կառաջարկէին մարմարեայ արձան կանգնել Հայոց միակ սիրելի Հայրիկին: Ժողովուրդը այժմ հարստացած լինելով իսկոյն ընդհանուր հանգանակութեան սկսուեցաւ, և մի շարքով միջոցաւ 100,000 Ֆրանք ստորագրուած էր, այնպէս որ շուտով դործի սկսել հնար եղաւ և մի քանի տարի յետոյ Կարինում կը տեսնուէր Խրիմեան Հայրիկի արձանը հոյակապ և փառաւոր ձիւնաթոյր մար-

մարիոնէ քանդակեալ ի ձեռն դարուն հռչակաւոր Հայ արուեստաւոր հանճարին, հետեւեալ պարզ արձանագրութեամբ. —

Կանգնեալ

Ի ՆՇԱՆ

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՍԻՐՈՅ

Ի ԴԱՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՌ

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ

ԱՆՄԱՀ

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մ. ՊԱԼԹԱԶՍԻ

Հ Ա Ն Գ Է Ս

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Ի ՆԻՒ-ԵՕՐԲ

Ամսոյս 7ի երեկոյին, Խոթըն Սթար սրահին մէջ, Նիւ Եօրքի Հայ Դաղթականութիւնն նորէն ունեցաւ Վարդանանց տարեդարձի հանդէսն վայելելու հաճոյքն: Հինգ տարիէ ի վեր մեր գաղթականութիւնն ամէն տարի միանգամ կուենար այս տարեդարձ հրաւիրմամբ Հայկական Միութեան, որոյ Սահմանադրութեան 10. յօդուածն կ'ըսէ «Հ. Միութիւնն տարին անգամ մը կը տօնէ իւր հիմնադրութեան տարեդարձի հանդէսն Վարդանանց Զօրավարաց տօնին հետ»: Այս տարի Դաղթականաց Միութիւնն, որ նորակազմ ընկերութիւն մ'է, փութացած էր յայտարարել թէ Վարդանանց նահատակութեան տարեդարձն տօնելու կը պատրաստուի, որոյ վերայ Հ. Միութիւնն պատշաճ փարկաւ իւր սովորական տարեդարձն յետաձգել: Մարտ 7ի երեկոյին ստուար բազմութիւն հայրենակցաց փութացած էր ի սրահն: Աղգային բարերարներու և աւագ արանց անուանք, երեկոյեան դիւցազին, Մեծին Վարդանայ, պատկերն, Տիկնայց և մանկանց ներկայութիւնն մասնաւորապէս հայկական և հայրենի հանգամանք մի կուտային հանդիսին: Դիտաւոր նորութիւնն էր թատերական մասն: Անշուշտ Միւրազնայք չէին կրնար սպասել տեսնելու անդ դերասաններ որպիսի կը տեսնեն Նիւ Ե, րք թատրոններուն մէջ, այլ տարակոյս չկայ թէ հայկական թատրոնի այս փորձն հանդիսականաց առ հասարակ հաճելի եղաւ ըստ առածին թէ հայրենի փուշն անոյ՞ է քան օտարինունն:



ՂԵՒՈՆԴԻ ԵՒ ՎՍԲՈՆԱՅ ԵՐԴՈՒՄԸ

Այս առթիւ կը բաղձամբ ոչ թէ քննադատել ու իցէ մէկն այլ խորհուրդ մի տալ տարեգարծի հոնդէսներու նկատմամբ: Հայոց Պատմութիւնն ունի Վարդանայ նման բողոքած տօնելի որեար, և ուստի լաւ է որ միևնոյն քաղաքին մէջ գտնուող տարբեր ընկերութիւններ տարբեր դիւցազանց տարեգործն տօնեն, որով աւելի հրահանգիչ և աւելի զբօսալի զանազանութիւն կունենան հոնդէսք: Արժան չէ՞ միթէ տօնել Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծին Ներսէսի, Մեսրոպայ, Մովսէս Խորենացւոյ, Ներսէս շնորհալոյ, Ռուբինեան թագաւորութեան հիմնարկութեան, Ներսէս Պատրիարքի տարեգարծներն:

Յիշենք նաև թէ 1893 Նոյ. 29, այն է մեր վերջին Թագաւորի մահուան հինգ հարիւրերորդ տարեդարձն կը մօտենայ: Երանի թէ Հայ Գաղթական Աշխարհ փութով կազմակերպուած պատրաստուէր

մեծափառ դիւցազնութեան արարքով այդ օր փայլեցունել վերստին ազգային ինքնօրինութեան արեգն յետ հինգդարեան խաւարման: Այդ թուական պէտք է նաև մեր բոլոր ընկերութեանց աչքին առջև լինի, զի Լեւոն Զ. ի մահուան հինգերորդ տարեգարծի տօնն կարէ և պարտի լինիլ ներկայ Հայութեան համար քան զամենայն յուզիչն, խանդավառիչն, և ներշնչողն:

Մեր գաղթական աշխարհի գեղեցիկ սեռն ևս թող տրթննայ և իւր գործօն դեր մեծագոյն ժողութեամբ կատարել սկսի: Մոռցած էք, Հայ Տիկնայք և օրիորդք, ինչ որ Խրիմեան Հայրիկ միանգամ ըսաւ. «Այր մարդիկ Թաղեցին զԼեւոն, կիներ պիտի յարուցանեն զայն»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ ԶԱՄԵՐԻԿԱՅ

(Շար. եւ Վերջ Տե՛ս Թիւ 4)

Ահաւասիկ Հայկական Միութեան մէջ խօսուած ճառերու կամատենախօսութիւններու ցանկն:

Ճառախօս

Հիւրմուկ
Թաւաճեան

Գարրիէլեան
Պոյաճեան
Փափագեան

Նիւթ

Գործնական կեանք
Գործնական պատճառք անմիաբանութեան

Հայ ապրինք յԱմերիկայ
Ճանապարհորդութիւն ի Զուիցերի
Ազգային Միութիւն Հայոց

Սիւնի Երկայնակեցութիւն
Ուռտ Ամերիկայի Խրատ առ Հայ Գաղթականս
Արապեան Պատմութիւն Հայոց
Թէրզեան Կեանք յԱմերիկայ և ի Տաճկաստան
Էքսէրճեան Գեղարուեստք
Գարրիէլեան Առողջութեան Տնտեսական արժէքն
Այվազեան Հայկական խնդիրն
Յակոբեան Հոգի խնդիրն ըստ Հէնրի Ճօրճի
Գարրիէլեան Օգնե՛նք Զէյթունի հրկիզելոց
Այվազեան Հանգանակութիւն վասն Զէյթունի
Գարրիէլեան Առողջաբանութիւն
Հիւրմիւզ Գործաւորաց միութիւնք օգտակա՞ր են իրենց

Գասպարեան Պարտ է ամուսնանալ
Այվազեան և Օգնել պարտ է Ս. Փրկչի Ազգային
Գարրիէլեան Հիւանդանոցին վերաշինութեան
Այվազեան Ուսման Հայոց վիճակն
Այվազեան Կենսագրութիւն Կոմս Լօրիս Մէ-
լիքօֆի

Ուալտօ Մէսարօս և Գարրիէլեան Հայք ինքնօրէն լինելու կարող են
Թէքիրեան Հայոց միւսութիւնն Արուեստից մէջ
կրթութեամբ

Մանկասարեան Հայ ցեղին կարողութիւններն
Արապեան Կենսագրութիւն Ճ. Ուաշինկթընի
Սարաճեան Վրդպտ. Խրատք Ազգին վիճակին վերաբե-
րութեամբ

Աւետիսեան Բնական աշխարհագրութիւն Հայաս-
տանի

Գարրիէլեան Փռանսական մեծ Յեղափոխութիւնն
Այվազեան Յունաստանի Յեղափոխութիւնն
Գասպարեան Պուլկարիոյ Յեղափոխութիւնն
Հայկունի Թէ որպէս կրնոյ զարգանալ Միու-
թիւնս

Թաւշանճեան Հայք և վաճառականութիւն
Օսկանեան Հայ մամուլն յԱմերիկայ
Գարրիէլեան Իրնոգիլձ կամ քննածութիւն
Թաւշանճեան Քաղաքավարութիւն
Եռսուֆեան Յարատեութիւն
Պաղտասարեան Վիճակագրական տեղեկութիւնք Հա-
յաստանի վերայ

Վիճաբանութիւնք հետեւեալ նիւթոց վրայ

Թէ Հայոց յԱմերիկայ գաղթելն օգտակա՞ր է :

Թէ արհեստ և լեզու չգիտոյ Հայոց յԱմերիկայ գալուն
հակառակելո՞ւ է

Թէ Օսմանեան Հայաստանի Ռուսիոյ հետ միացումն օգ-
տակար կրնայ լինիլ

Թէ Ոգելից ըմպելեաց վաճառումն օրինօք արգելուլ պարտէ
Թէ Հայք յարմար են ինքնօրինութեան

Թէ Ամերիկեան կենցաղն լաւագո՞յն է քան զարեւելեանն

Թէ Հայոց Ամերիկայ գաղթելն պարտ է քաջալերել
Թէ որն է զարդիս գերակշիռ — Ռազմագիտութիւնն թէ
գիւանագիտութիւնն

Թէ ի՞նչ են տպաւորութիւնք Ճէյմս Պրայսի այցելու-
թեան առ մեզ

Թէ Հայի. խնդրոյ լուծման համար օտարաց միջամտու-
թիւնն հարկաւո՞ր է

Առաւել քան մետոսան ատենախօսութիւնք ալե-
ղած են Հայկական Միութեան տարեգարծի հանդէսնե-
րուն մէջ, զորս յիշած չեմք վերի ցանկին մէջ :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ԽՆՁԻՐՆ

Տնօրէն «Հայք» Հայրենաշէն Հանդիսին .

Արտասահմանի Հայոց «Ազգային ժողով» կամ Կեդրոն
մը կաղմակերպելու հարցն այժմ անհրաժեշտ դարձած
է Եւրոպայի մէջ յանուն ազգին խօսող մարմին մը պէտք
է որ ունենանք Հայի. խնդրոյ ներկայ պայմանաց մէջ :
Յայտնի է թէ Տաճկաստանի մէջ իրաց վիճակն անկարե-
ւի ըրած է ամենէն համարձակ պատրիարքին համար
անգամ և իցէ պաշտօնական պատուիրակութիւն ա-
ռաքել յԵւրոպա . ուրեմն Տաճկաստանէն դուրս գտնուող
Հայութեան միայն անկ է պաշտօնական մարմին մը կազ-
մել Եւրոպայում : Յանուն Հայ գաղթական աշխարհին
խօսող կամ գրող պատուիրակութիւն մ ինոյն՝ սկ Վե-
հապետաց աւելի լուրջ ուշադրութեան կ'արժանանայ
քան թէ Հայրենասիրական մեծ կամ պղտիկ Միութեանց
կողմանէ մատուցուած թուղթք և խնդրք :

Այս չէ ամենն : Հայրենասիրական գործին համար
մինչև ցարդ ստակ տուողներն մեր գործաւորներն եղած
են և զայն՝ գործածողք մեր մէկ քանի վարժապետք :
Մեր վաճառականք, սեղանաւորք, միլիոնատէրք, բարձ-
րաստիճան անձինք գրեթէ բոլորովին ձեռնպահ մնա-
ցած են : Մեր գործիչներն ալ օտարաց ետեւէն ինկած
են, բայց մեր րարձրագոյն դասերն չահելու և գործա-
կից ընելու չեն աշխատիր : Յաջողիլ անկարելի չէ, եթէ
յարմար միջոց ձեռք առնուի : Եւ ինչ է միջոցն : Ազ-
գային կեդրոն մը կազմել ձեռնհաս անհատներով, ինչ-
պէս որ «Հայք» կը խնդրէ : Այդ Կեդրոնական Խորհուրդ
կամ Երեսխոսական ժողով, ինչպէս որ կոչուի, ու-
նենայ իր կեդրոնական կամ ազգային անտուկ, և իւր ել-
ևմտից հաշիւն պարտական լինի ազգին պատուիրակաց
գումարման առջեւ դնել տարին մէկ անգամ հանդերձ
իր բարոյական հաշուօք :

Միթէ անկարելի՞ կը լինի ակնկալել որ մեր մեծա-
տունք գաղտնապէս կամ յայտնապէս դրամական նպաստ
ընձեռեն այնպիսի Ազգային Մետուկի մը : Մեծահարուստ
կամ մինչև իսկ միջակ կարգի վաճառականք սովորած են,
իրենց զբաղման բնութենէն, իրենց դրամներն գործա-
ծելու համար կարելի եղած միջոցներուն ամենէն ապահ-
վըն ընտրել, մանաւանդ երբ խոշոր գումարի վրայ է
խնդիրն, մինչ չնչին գումար տուող գործաւորներն կըն-
տրեն ամենէն պարզ եւ դիւրին միջոցներն : Յարգենք
մեր հարուստներուն արդար միտումներն եթէ կուզեմք
որ նոքա ալ մեզ վստահին իրենց գանձերն :

ՆԵՐՍԷՍ

Հ Ա Յ Ք

Մեծաւ գոհութեամբ կը ծանուցանեմք թէ մեր թերթ թէ նիւթական և թէ մանաւանդ բարոյական այնքան ընդհանուր քաջալերութեան արժանացած է զի այլ ևս ներքին չէ տարակուսիլ թէ կատարեալ յաջողութեամբ պիտի սկսակուր իւր ընթացքը :

Գանձիւրէն կը գրէ մեզ Տիար Ն. « Հայք ըստ ամենայնի համակրելի թերթ մ' է . նպատակը սուրբ , նիւթը պայծառ , ոճն անուշիկ և լեզուն ամենապատուական , կը մնայ յարատեւութիւն և յաջողութիւն , զորս ի բոլոր սրտէ կը մաղթէ Ձերդ . . . »

Մանչեսթըրէն կը գրէ Տիար Պ. « Հաճոյք է ինձ ծանուցանել ձեզ թէ . « Հայք »-ը եռանդուն զարմացողներ ունի աստ . . . և անոր համբաւն չարունակ կը մեծնայ . . . »

Նոյն քաղաքէն — « Շատ և բազմապատիկ հաճութեամբ կընթեռնում ձեր նորահաստատ թերթ . . . Հաճեցէք շարունակել ձեր յղումն և միանգամայն ընտիր յղացումն . . . Ձեր հարեւանորական յստակ զգացմանց զգացակից —

Ս . Վ . Պ .

Նոյնպիսի քաջալերութիւններ հասած են մեզ Քէօսթէնէն և Ֆօքլանէն , Ռուսնուքէն և Հասքովոյէն , Բարիզէն , Լոնտոնէն , Ալէքսանդրիայէն , Կ . Պօլսէն , Մոսկուէն , Կալիթայէն և Պարսկաստանէն :

Քաջայայտ էմք և ուրախ : Ծնորհակալ եմք բոլոր մեր ծանօթ և անծանօթ , մօտաւոր և հեռաւոր համակրողներէն , և կը խնդրեմք իրենց ջերմ հոգածութեան շարունակումն :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ի Ն Ա Ջ Դ Ե Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն
Ի ՎԵՐԱՅ ՖԻԶԻԿԱԿԱՆԻՆ

Հետեւեալն համառօտեալ թարգմանութիւնն է այն Ֆռանսերէն Բանախօսութեան զոր « Հայք »-ի խմբագիրն անցեալներ ըրաւ Ֆռանսացի երիտասարդաց Քրիստոնէական ընկերութեան :

Տեարք .

Դեռ պատանի՝ յաճախ կերթայի յայց հօրաքեռս , յերկրի մերում , ի Հայաստան : Նա մեծ պարտէզ ունէր պտղատու ծառոց և ես չառ կը սիրէի ընտիր տանձ , խնձոր , ծիրան , թուփ և այլն : Հօրաքոյրս ունէր նաև պատուական կատու մի հազուագիւտ խոշորութեամբ : Օր մի , յայցեղութեան իմում , չկրցայ գտնել կատուն այն մեծ և գեղեցիկ , այլ անոր տեղ ուրիշ մի կար փոքրիկ և նիհար : « Կատուն ու՞ր է » հարցի հօրքրոջս : « Ահաւանի՛կ , պատասխանեց , չճանչցիր զինքն , այն քան այլակերպած է : Ծուն մի յափշտակեց խեղճ անասնոյն ձագուկն . որոյ վերայ չկրնալով մխիթարուիլ մլաւեց ցայգ և ցերեկ , առանց ուտելու և խմելու , և հասաւ այս՝ վիճակին : »

Այս խոշորութիւնց նցեց զիս , և իբր նշանաւոր բացատրութիւն բարոյականի ազդեցութեան ի վերայ ֆիզի-

քականին՝ մնաց խորապէս տպաւորեալ իմիտս իմ , և այն օրէն ի վեր մասնաւոր ուշադրութեամբ ուսանիլ սկսած եմ ազդեցութիւնն բարոյականին ի վերայ ֆիզիքականին և , փոխադարձաբար , ֆիզիքականին ազդեցութիւնն ի վերայ բարոյականին : Այս երեկոյ խնդրոյն մէկ երեսն միայն պիտի դիտենք , այն է բարոյականին ազդեցութիւնն ի վերայ ֆիզիքականին :

Թէ բարոյական յուզմունք անմիջական ազդեցութիւն մի կը գործեն մարմնոյն վերայ , այն այնքան քաջածանօթ է զի աւելորդ է հաստատել աստ սկզբունքն : Երբ վշտահար եմք , կ'արտասուեմք . մեղմալճառ՝ կը հառաչեմք , զարհուրեալ՝ կը դողամք . ամօթահար՝ կը չիկնիմք , զայրացեալ՝ կը տփգունիմք , ապշեալ՝ յակճիռս կամք , իմի բան , ամեն ներքին յուզում յառաջ կը բերէ մարմնական տպաւորութիւն մի , և այս տպաւորութիւն թէ արաքին թէ ներքին գործարանաց վերայ կը գործուի թէև ներքինն ընդհանրապէս ուշադրութենէ կը վրիպի :

Եւ ինչ է այս տպաւորութեանց ազդեցութիւնն առողջութեան վերայ : Կրնայ այդ ազդեցութիւն լինիլ նպաստաւոր կամ աննպաստ : Նախ տեսնենք թէ ո՞րք են կիրք և ակորթակիք որք մնասակար ազդեցութիւն կը գործեն առողջութեան վերայ :

Քանզամենայն պարզէն սկսելով յիշենք Շասակերուծիւնն : Մինչ տղայ էի , կարծէի թէ չնտակեր նա է որ խենթ Գալոսին չափ կրնայ ուտիլ — այս մարդը մեր քաղաքացին էր , նշանաւոր իւր ահագին ուժով և իւր արտակարգ շատակերութեամբ , և կրնար ողջոյն ոչխար մի ուտել ի մի ճաշ — Այժմ գիտեմ թէ շատակեր նա է որ կշտացած լինելէ յետոյ կուտէ քիչ կամ չատ , կամ նա որ ոչ թէ ակորթակի և քաղցու առաջ , որդութեան կը հետևի որք բնական պիտոյից սահմաններն կը ցուցնեն , այլ կերակրոց հոմեղութեան և մանաւանդ արուեստական միջոցներով , համեմիւք և ընպէսօք գրգռեալ ակորթակի մի կը հետեւի : Շատակերութեան ամէն ատիճաններն ալ առաւել կամ նըուազ մնասարեր են առողջութեան , և ծնունդ կուտան դժմարսութեան , ստամոքսի ընդլայնման , չաքարամիզութեան , յօդակաթի (կութ և որ ի կարգին :

Բարկուծիւնն ևս հակառողջական յուզում մը է : Սաստիկ բարկութիւնն կրնայ չանթի պէս սպաննել : Մանուկներն անգամ , ըստ Պուշիւի դիտողութեան , կրնան յանկարծամահ լինիլ սաստիկ բարկութեամբ կամ պոռալով : Հասարակ բարկութիւնն ալ թէև վայրկենական տեւողութիւն ունենայ , այնքան կը սպառէ մարմնոյ ոյժն որքան կէս ժամու չըջագայութիւնն չսպառեր : Ոմանք բնութեամբ դիւրագրգիռ են ի բարկութիւն , այսպիսիք երբէք չեն կրնար գիրանալ կամ մեծ ուժոյ տէր լինել : Չեմ ուրանար թէ կայ սուրբ բարկութիւն մի որ մարդուն բոլոր ոյժն իւր բաղկաց. մէջ կը հաւաքէ ահագին հարուած մի տալու կարող ընելու համար , բայց այդ քանի՞ անգամ կը պատահի մարդուն բոլանդակ կենաց մէջ : Քաղաքակրթեալ մարդն բազում մնացորդ-

ներ կը կրէ յանձին՝ իւր բարբարոս կամ վայրենի նա-
խահայրերէն, բարկացողութիւնն և շատակերութիւնն
այդ կարգէն են. պէտք է անդադար դէմ դնել անոնց,
(Շարունակելի),

ԷՋՄԻՍՏՆԻՅ մեզ գրում են, որ վեհ. Մակար կա-
թողիկոսի հիւանդութիւնը բաւական ծանրաշէ է:
Մտադրութիւն կայ ուրիշ տեղերից բժշկներ հրաւի-
րել: Վերին աստիճանի ծանրացած լինելու պատճառով
վեհափառը դժուարութեամբ է դիմանում որ և է տկա-
րութեան: Մշակ. 12 Փետր.

— Մանչէսթըր Էկզէմփլըր Էնտ Թայմզի մէկ յօդ-
ուածէն կը տեղեկանամք թէ Մանչէսթըրի Հայկական
Եկեղեցին Սուրբ Երրորդութեան կառուցեալ է 1870ին,
ընկերը Պրուք կոչուած փողոցում, և ունի շնորհքով
առաջնորդարան և ընդարձակ գետին: Անգղիոյ մէջ մի-
ակ Հայ Եկեղեցին է այն, ինչպէս որ Ասթըրի Ս.
Փրկիչ Եկեղեցին ալ Միա եալ Նահանգաց մէջ դեռ մի-
ակ է:

— Ֆիլատէլֆիոյ Փրայիք Լէնըր լրագրի մէջ կը գտ-
նեմք Համառոտութիւնն միսիօնար Պատ. Ու. Ռ. Չէմ-
պլըսի մէկ բանախօսութեան զոր տուած է Օրիէնթըլ
Քրիստի մէջ «Հայաստանեայ Եկեղեցւոյ քաղաքային
աշխարհավարութեան վերայ», և կը նկարագրէ զայն
իրր հանրապետական, Բանախօսն արդէն ծանօթ է մեր
Նիւ Եօքքի գաղթականութեան և արժանի է այս անգամ
եւս մեր շնորհակալեաց և շնորհաւորութեանց իւր ու
ղիղ տեսութեան, և համակիր բանից համար վերաբե-
րութեամբ մեր ազգային Եկեղեցւոյ, և այնքան աւելի
որքան հազուադիւտ են իրեն նման միսիօնարք ի Տաճ-
կաստան:

— Տիկին Ժ. Ատամս Նուվէլ Ռեվիւի մէջ կըսէ, «Լա-
նիշ մի. պէտք է տալ Սուլթանին, որ ինքնին կար-
գադրած է սպարիարքարանաց խնդիրն առանց հոգ
ընելու իւր մեծ Եպարքոսին գիմադրութիւնն ներշնչ-
եալ ի Վառնակ նիզակալութենէ, յորոց Անգղիա կը
բաղձայ խռովութիւն յարուցանել յԱրեւել յադուտ
Պուլիարայ և Աւստրիոյ... Երանի թէ 1509 խեղճ Հա-
յերն, որք փակուած են Կ. Պօլսոյ անիծեալ բանախօս
մէջ, ընդունին ոչ պատիր այլ իրական ներողութիւն
արպէս խոստացած է Սուլթանն:

Ապտ—իւլ—Համիտ առաւել քան զայլս պէտք է հա-
ճոյակատար լինի. Արդեօք չզգածուիր նա իւր եղբայ
Մուրատն ի նպաստ իւր մատնողաց ողբերգական վախ-
ճանէն... Միտհատ չարաչար մեռաւ ութամսեայ աք-
սորէ յետոյ ի Թաիֆ. Մէհմէտ Ռիւտընի մեռաւ ըս-
պանեալ յանկողնի. և վերջերս ալ հէք Սաատուլլահ
Փաշա, Մուրատի նախկին քարտուղարն, 1883էն ի վեր իրր
գետպան ի վիշննա փակուած միակէ յետոյ, անձնասպան
եղաւ արտասովոր արութեամբ... Այս բաղդն չ'իրնար
միթէ վիճակիլ Սուլթանին ևս մի օր՝ եթէ վերջապէս չա-
զատէ զիւր եղբայրը:

ԲՆԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՔ»-ի բաժանորդագրութիւնը ամբողջ 1891 տար-
ւոյն համար կ'ընդունուին: Որ ամսոյ մէջ ալ որ լինի
վճարումն, կը հաշուի Յունվար 1 էն և կը յղուի թերթիս
Ա. թիւէն սկսեալ:

Պարսկաստանի Հայոց համար բացառութիւն ընելով,
թերթիս տարեկան բաժանորդագին կը նշանակեմք եօթն
ու կես ֆրանք:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

ՈՒՂԱՔԱՓՈՒՍ. Ս. ԵԿԵՂԵՑԻ

Ամէն Կիրակի ժամ 1.30ին յետ միջառուր, առաւօտ-
եան ժամերգութիւն կը լինի. Նաև ամէն հինգշաբթի
երեկոյ, ժամ 7.30ին Եկեղեցական երաժշտութեան վար-
ժութիւնը կը լինին:

ՍԲ. ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ի ՆԻՒԵՐՈՐԻ

Ընթերցող

ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ԳԻՐԷՉԵԱՆ

Ամէն Կիրակի, յետ կես առուր ժամ 2.30ին ի Կրէյս
Մատրան Պրօտուէյ և Տաճկերորդ փողոց կրօնական
պաշտամունք կը կատարուին հայերէն լեզուաւ և Եպիս-
կոպոսական գրութեամբ:

ՆՈՐ ՀԱՏԱԱԿՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

Լոյս տեսաւ

ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ

Գրեց — Հ. ԿԻՐՍԱԿՈՍ ԲԱՐՍԱԿԵԱՆ

136 երեսներէ բաղկացեալ գրքոյի մէջ, որ կը խօսի
Նոր Աշխարհի լուսոյն և խաւարին վրայ, լաւ եւ յոռի
սովորութեանցն եւ բարուց վրայ, եւ յաճախ կը բաղդա-
տէ Ամերիկայի կաքն ու գնացքն արեւելից մէջ տես-
նուածներուն: Գիրն է 25 սէնթ, կեդրոնատեղին է հե-
ղինակի տունն 162 Ուէսթ Սթրիթ, Ուսթըր, Մաս:

LANTELM'S

Hotel and Restaurant,

10 UNION SQUARE,

New York City

16րդ և 17րդ փողոցաց միջև, արեւելեան կողմն:

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ խոհարարութիւն գաղիական:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK

331 7th Avenue,

NEW YORK

Դեղագիրք կը պատրաստուին խնամով:

H Eguinian,

BOOK AND JOB PRINTER

100 Centre St,

New York City.